

# ՆՆԱՅԵՆՔ ԷՆԵՐԳԻԱՆ

Բազմաբնակարան շենքերի էներգախնայողության և  
էներգաարդյունավետության ցուցումներ





Ներկայումս Հայաստանում ՀՀ բնապահպանության և քաղաքաշինության նախարարությունների համակարգման ներքո իրականացվում է «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ-ԳԷՖ/00059937 ծրագիրը (2010-2015թթ.), որի նպատակն է նվազեցնել էլեկտրական և ջերմային էներգիայի սպառումը, միաժամանակ նվազեցնելով դրանց հետ կապված ջերմոցային գազերի արտանետման ծավալները Հայաստանի նորակառույց և վերակառուցվող բնակելի շենքերից:

«Խնայենք էներգիան. բազմաբնակարան շենքերի էներգախնայողության և էներգաարդյունավետության ցուցումներ» գրքուկը մշակվել է «Երրորդ բնություն» հասարակական կազմակերպության կողմից, օգտագործելով նաև «Էներգախնայողության Այլանս» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի տեղեկատու թերթիկը և նպատակ ունի բարձրացնել բազմաբնակարան շենքերի բնակիչների իրազեկվածությունը շենքերի և բնակարանների էներգախնայողության և էներգաարդյունավետության վերաբերյալ:

## Էլեկտրաէներգիա

Գնեք ժամանակակից էներգաարդյունավետ էլեկտրական սարքավորումներ: Հների համեմատ, նույնիսկ մեծ արժողությամբ նոր սարքավորումները տնտեսապես ավելի ձեռնտու են՝ էլեկտրականության տնտեսման հաշվին: Առաջին հերթին դա վերաբերվում է մշտական օգտագործման սարքավորումներին՝ լուսավորության լամպերին, սառնարաններին, լվացքի մեքենաներին, հեռուստացույցերին և այլն:



Փոխարինեք բոլոր տեսակի լամպերը էներգախնայող լամպերով, որտեղ դա նպատակահարմար է: Օրական 4 ժամից ավելի աշխատող հասարակ 100 Վտ հզորությամբ լամպը փոխարինելով 23 Վտ հզորությամբ լյումինիսցենտային (ցերեկային) լամպով՝ դուք կստանաք նույն լուսավորությունը և տարեկան կխնայեք մոտ 3300 դրամի համարժեք էլեկտրաէներգիա (110 կՎտ), պետք է հաշվի առնել նաև, որ այդ լամպերը ավելի երկարակյաց են: Ձեր հարմարավետության ապահովման համար կարող եք ընտրել տարբեր գունային սպեկտրի (օրինակ դեղին, կրեմագույն և այլն) ցերեկային լամպեր:


## Խոհանոց

Սառնարանը, շուրջօրյա աշխատելով, ծախսում է ձեր տան էլեկտրաէներգիայի 15-20%-ը: Այդ ծախսը կրճատելու համար սառնարանը տեղադրեք ջեռոցից (ДУХОВКА), ջեռուցման մարտկոցներից և գազօջախից հնարավորին չափ հեռու: Հետևեք, որ սառնարանի դռները ամուր փակվեն: Անհրաժեշտության դեպքում փոխեք դռան ջերմամեկուսիչ ռետինը: Մի տեղադրեք տաք ուտեստներ սառնարանում: Հալեցրեք սառցե խցիկի մթերքները սառնարանում: Սառնարանում օպտիմալ ջերմաստիճանը պետք է լինի  $+5^{\circ}\text{C}$ , սառցե խցիկում՝  $-18^{\circ}\text{C}$ :

Օգտագործեք լվացքի և սպասք լվացող մեքենաները լրիվ ծանրաբեռնվածությամբ և աշխատանքի խնայողական ռեժիմով:

## Ջեռուցում

Բնակարանում  $1^{\circ}\text{C}$ -ով ջերմաստիճանի նվազեցումը տնտեսում է էներգիայի 3%-ը: Տեղադրեք ջերմաչափեր բոլոր սենյակներում և հետևեք դրանց



ցուցմունքներին: Հնարավորության սահմաններում բնակելի սենյակներում ջերմաստիճանը պետք է պահպանվի օրվա ընթացքում ոչ քարձր  $21^{\circ}\text{C}$ -ից, իսկ գիշերը  $+13-15^{\circ}\text{C}$  սահմաններում:

Մի թաքցրեք ջեռուցիչները կամ ջեռուցման մարտկոցները կահույքի կամ վարագույրի հետևում: Տաքությունը պետք է սենյակում տարածվի անարգել: Հետևեք, որ ջեռուցման մարտկոցներում օդ չկուտակվի, այն նվազեցնում է արդյունավետությունը: Անհրաժեշտության դեպքում հրավիրեք մասնագետի:

Ստուգեք պատուհանների և դռների շրջանակների հերմետիկությունը: Հենց այստեղ է կորչում ձեր բնակարանի ջերմության զգալի մասը: Պատուհաններին մեկուսիչ ժապավեն փակցրեք և կիրառեք այլ ջերմամեկուսիչ միջոցներ: Արդյունքում՝ ներսենյակային օդի ջերմաստիճանն աճում է առնվազն 3-4°C-ով: Գիշերը փակեք պատուհանների վարագույրները կամ շերտավարագույրները, իսկ ցերեկը բացեք դրանք, որպեսզի արևի լույսը թափանցի ձեր բնակարան:



Պատի և ջեռուցման մարտկոցի միջև տեղադրված փայլաթիթեղածածկ ջերմապաշտպանիչ պատնեշը կարող է ավելացնել մարտկոցի ջերմատվությունը 20%-ով՝ կանխելով



պատից կորուստները և նվազեցնելով ջեռուցման ծախսերը մոտ 10%-ով: Սուսնձեք փայլաթիթեղը նրբատախտակին (ֆաներային) և տեղադրեք այն ջեռուցման մարտկոցի հետնամասում:

Եթե ձեր վարագույրները երկար են, ջերմության գրեթե 20%-ը հայտնվում է ծուղակում և կորում է ձեր պատուհաններից: Վարագույրները չպետք է ծածկեն մարտկոցը, որպեսզի ջերմությունը տարածվի դեպի սենյակ: Ձմռանը, սենյակի ջերմության առնվազն 10-14% կորում է պատուհանի ապակու միջոցով: Խնայեք ջերմությունը, պատուհանը ծածկելով կարճ շերտավարագույրներով:


Հետևեք, որ շենքի ընդհանուր շքամուտքի դռները միշտ փակ լինեն: Մի անտեսեք շքամուտքի, աստիճանավանդակի, ընդհանուր տարածքների ջերմամեկուսացումը: Շենքի մուտքի կոտրված կամ վատ փակվող դռան և աստիճանավանդակի պատուհանների կոտրված ապակիների միջոցով ջերմության կորուստները կարող են կազմել շենքի ընդհանուր ջերմային կորստի 5-15%: Շքամուտքի դռների և պատուհանների ջերմամեկուսացումը զգալիորեն կպահպանի ձեր բնակարանի ջերմությունը և կկրճատի ջեռուցման ծախսերը: Նորոգեք և փակեք մուտքի դուռը և ապակեպատեք աստիճանավանդակների պատուհանները: Այս միջոցառումը խնայում է ամբողջ շենքի ջերմությունը, բերելով ներբնակարանային օդի 1-2°C-ով տաքացման:

## **Արեգակնային էներգիայի օգտագործում**

Արեգակնային լույսի և ջերմության օգտագործումը՝ մաքուր և բնական միջոց է մեզ անհրաժեշտ բոլոր ձևերի էներգիայի ստացման համար: Արեգակնային ջրատաքացուցիչ մարտկոցների միջոցով կարելի է ջեռուցել բնակելի

կամ արտադրական շենքեր, կամ ապահովել դրանց տաք ջրամատակարարումը:

Մեկ մ<sup>2</sup> մակերեսով արեգակնային ջրատաքացուցիչ մարտկոցը Շիրակի սարահարթի պայմաններում տարեկան արտադրում է մոտ 1200 կՎտժ ջերմային էներգիա:



## Կարող եք տնտեսել ինքներդ

Առաջին հայացքից ձանձրալի՝ էներգախնայողության միջոցառումները հանգեցնում են միաժամանակ երեք դրական արդյունքների.

1. Կրճատում են ձեր ընտանիքի ծախսերը՝ հնարավորություն տալով տնտեսել միջոցներ այլ կարիքների համար:
2. Բարելավում են ձեր կյանքի որակն ու ապահովում հարմարավետություն:
3. Կրճատում են շրջակա միջավայրի աղտոտումը:



Ամենակարևորը՝ էներգիայի խնայողությունը բավականին դյուրին է և պահանջում է միայն գիտակցված մոտեցում:



«Շենքերի էներգետիկ արդյունավետության  
բարձրացում»

ՄԱԶԾ-ԳԷՖ/00059937 ծրագիր

Կառավարական 3-րդ շենք, գրասենյակ 549,  
0010, Երևան

Հեռ` (010) 583920 (22), 583932 (18),

Ֆաքս` (010) 583933,

Վեբ կայք` [www.nature-ic.am](http://www.nature-ic.am)

Էլ-փոստ` [buildings@nature.am](mailto:buildings@nature.am)

“Երրորդ բնություն” ՀԿ

ք. Գյումրի, 26 կոմիսարների փ., սուն 56ա

Հեռ` (094)-53-58-59, Ֆաքս` (0312) 4-58-59,

Վեբ կայք` [www.3nature.am](http://www.3nature.am)

Էլ-փոստ` [thirdnaturengo@yandex.ru](mailto:thirdnaturengo@yandex.ru)